ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2021-2023թթ. Հայաստանի Հանրապետության պետական պարտքի վերաբերյալ (ապրիլ ամսվա վերջի դրությամբ)









2023թ. ապրիլի 30-ի դրությամբ՝

1) ՀՀ պետական պարտքը կազմել է 4 տրիլիոն 242,7 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 1.3%-ով, նվազելով 2022թ. ապրիլի 30-ի նկատմամբ՝ 0,9%-ով, իսկ 2021 թվականի ապրիլի 30-ի նկատմամբ՝ 7.1%-ով,

2) ՀՀ կառավարության պարտքը կազմել է 4 տրիլիոն 23.7 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2022 թվականի դեկտեմբերի 31-ի նկատմամբ, 1,4 %-ով, նվազելով 2022թ. ապրիլի 30-ի նկատմամբ՝ 0.9 %-ով, իսկ 2021թ. ապրիլի 30-ի նկատմամբ՝ 6,6%-ով,

3) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 219.0 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0.9%-ով, նվազելով 2022թ. ապրիլի 30-ի նկատմամբ՝ 0.7%-ով, իսկ 2021թ. ապրիլի 30-ի նկատմամբ՝ 15.0%-ով,

4) ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 10 մլրդ 973,3.մլն ԱՄՆ դոլար աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 3.2%-ով, 2022թ. ապրիլի 30-ի նկատմամբ՝ 16,1%-ով, իսկ 2021թ. ապրիլի 30-ի նկատմամբ՝ 25.1%-ով,

5) ՀՀ կառավարության պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 10 մլրդ 406.9 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 3.2%-ով, 2021թ. ապրիլի 30-ի նկատմամբ՝ 16.1%-ով, իսկ 2021թ. ապրիլի 30-ի նկատմամբ՝ 25,7%-ով,

6) ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 566,4 մլն. ԱՄՆ դոլար աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 2.7%-ով, 2022թ. ապրիլի 30-ի նկատմամբ՝ 16.4%-ով, իսկ 2021թ. ապրիլի 30-ի նկատմամբ՝ 14.4%-ով,

7) ՀՀ կառավարության արտաքին պարտքը կազմել է 2 տրիլիոն 268.4 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 2.2%-ով, 2022թ. ապրիլի 30-ի նկատմամբ՝ 17.1%-ով, իսկ 2021թ. ապրիլի 30-ի նկատմամբ՝ 30.3%-ով,

8) ՀՀ կառավարության ներքին պարտքը կազմել է 1 տրիլիոն 755,3 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 6,4%-ով, 2022թ. ապրիլի 30-ի նկատմամբ՝ 32.5%-ով, իսկ 2021թ. ապրիլի 30-ի նկատմամբ՝ 66.1 %-ով,

9) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 219.0 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0.9%-ով, նվազելով 2022թ. ապրիլի30 -ի նկատմամբ 0.7%-ով, իսկ 2021թ. ապրիլի 30 նկատմամբ՝ 15,0 %-ով,

10) ՀՀ կառավարության արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 5 մլրդ 866.9 մլն ԱՄՆ դոլար, նվազելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 0.5%-ով, 2022թ. ապրիլի 30-ի նկատմամբ՝ 2.8 %-ով, իսկ 2021թ. ապրիլի 30-ի նկատմամբ՝ 6.1%-ով,

11) ՀՀ կառավարության ներքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 4 մլրդ 540,0 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 8.3%-ով, 2022թ. ապրիլի 30-ի նկատմամբ՝ 55.3%-ով, իսկ 2021թ ապրիլի 30-ի նկատմամբ՝ 123.7%-ով,

12) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 566.4 մլն ԱՄՆ դոլար աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 2,7%-ով, 2022թ. ապրիլի 30-ի նկատմամբ՝ 16,4 %-ով, իսկ 2021թ. ապրիլի 30-ի նկատմամբ՝ 14,4%-ով:

ԱԺԲԳ









ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքը 2023թ. ապրիլի 30-ի դրությամբ կազմել է 4 մլրդ 503.1 մլն ԱՄՆ դոլար նվազելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 0.02 %-ով, աճելով 2022թ.-ի ապրիլի 30-ի նկատմամբ՝ 10.9%-ով, իսկ 2021թ. ապրիլի 30-ի նկատմամբ նվազելով 1.8%-ով:

2023թ. ապրիլի 30-ի դրությամբ ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի կառուցվածքում՝

1) միջազգային կազմակերպությունների բաժինը կազմել է 77.99%, ինչը ավել է 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից 0.37 տոկոսային կետով, 2022թ. ապրիլի 30-ի ցուցանիշից պակաս է 0.54 տոկոսային կետով, 2021թ. ապրիլի 30-ի ցուցանիշից ավել է 0.54 տոկոսային կետով,

2) օտարերկրյա պետությունների բաժինը կազմել է 21.72%, ինչը պակաս է 2022թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ 0.36 տոկոսային կետով, 2022թ. ապրիլի 30-ի համեմատությամբ ավել է 0.59 տոկոսային կետով, իսկ 2021թ. ապրիլի 30-ի համեմատությամբ պակաս է 0.41 տոկոսային կետով,

3) առևտրային բանկերի բաժինը կազմել է 0.29%, ինչը 0,01 տոկոսային կետով պակաս է 2022 դեկտեմբերի 31-ի ցուցանիշից, 2022թ. ապրիլի 30-ի ցուցանիշից պակաս է 0.05 տոկոսային կետով, իսկ 2021թ. ապրիլի 30-ի ցուցանիշից պակաս է 0.13 տոկոսային կետով:

2023թ. հունվար-ապրիլին ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված՝

1) տոկոսավճարները կազմել են 43.12 մլրդ դրամ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 44.78 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 33.72 մլրդ դրամով:

2) ներքին տոկոսավճարները կազմել են 13.37 մլրդ դրամ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 46.78 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 39.39 մլրդ դրամով:

3) արտաքին տոկոսավճարները կազմել են 29,.75 մլրդ դրամ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 2.0 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 5.68 մլրդ դրամով:

ԱԺԲԳ

Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ



Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը ներքին և արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



2023թ. հունվար-ապրիլին պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը՝

1) փոխառու զուտ միջոցների հաշվին կազմել է 73.81 մլրդ դրամ, ինչը ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ 7.32 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս 333,14 մլրդ դրամով:

2) ներքին փոխառու միջոցների հաշվին կազմել է 91.27 մլրդ դրամ, ինչը ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 36.75 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 36.57 մլրդ դրամով,

3) արտաքին փոխառու միջոցների հաշվին կազմել է -17.46 մլրդ դրամ, ինչը պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 29.43 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 369.71 մլրդ դրամով:

ՀՀ կառավարության կողմից 2023թ. հունվար-ապրիլին՝

1) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 34.41 մլն դոլար տոկոսավճար, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 121.1%-ով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 1409.2%-ով,

2) արտաքին վարկերի մարման նպատակով վճարվել է 80.44 մլն դոլարի մայր գումար, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 16.3 %-ով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 755.7%-ով,

3) ստացվել են 36.62 մլն դոլարի վարկային միջոցներ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ նվազել է 60.8 %-ով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 21.5%-ով,

4) արտաքին վարկերի սպասարկման և մարման նպատակով վճարվել է 114.85 մլն դոլար (տոկոսավճար և մայր գումարի մարում), ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 35.6%-ով, իսկ 2021 թ, ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 883.3 %-ով:

ԱԺԲԳ

Պետական պարտատոմսերի ծավալը, մլրդ դրամ



Պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը, օր



ՀՀ Կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը, %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքը, ըստ թողարկման (ներգրավման)



2023թ. ապրիլի 30-ի դրությամբ՝

1) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի ծավալը կազմել է 1 տրիլիոն 594.7մլրդ դրամ, ինչը 2022թ. դեկտեմբերի 31-ի, 2022թ. ապրիլի 30-ի և 2021թ. ապրիլի 30-ի համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 98.4, 312.8 և 588.5 մլրդ դրամով,

2) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը կազմել է 3042 օր, ինչը 2022թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ պակաս է 162 օրով, 2022թ. ապրիլի 30-ի համեմատությամբ պակաս է 724օրով, իսկ 2021թ. ապրիլի 30-ի համեմատությամբ պակաս է 1201 օրով:

ՀՀ կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը 2023թ. ապրիլի 30-ի դրությամբ կազմել է 6.52%, ինչը 2022թ. դեկտեմբերի 31-ի համապատասխան ցուցանիշի համեմատությամբ ավել է 0.23 տոկոսային կետով, 2022թ. ապրիլի 30-ի համեմատությամբ ավել է 1.52 տոկոսային կետով, իսկ 2021թ. ապրիլի 30-ի համեմատությամբ ավել է 2.26 տոկոսային կետով:

ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության 2023թ. ապրիլի 30-ի դրությամբ՝

1) կարճաժամկետ պարտքի բաժինը կազմել է 3.01%, ինչը 2022թ. դեկտեմբերի 31-ի, 2022թ. ապրիլի 30-ի և 2021թ. ապրիլի 30-ի համեմատությամբ համապատասխանաբար մեծ է 0.39 ,փոքր է 0.26 և մեծ է՝1.9 տոկոսային կետով,

2) միջնաժամկետ պարտքի բաժինը կազմել է 14,49 %, ինչը 2022թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ մեծ է 1.44 տոկոսային կետով, 2022թ. ապրիլի 30-ի համեմատությամբ փոքր է՝ 12.77 տոկոսային կետով, իսկ 2021թ. ապրիլի 30-ի համեմատությամբ՝ մեծ է 8.55 տոկոսային կետով,

3) երկարաժամկետ պարտքի բաժինը կազմել է 82.50%, ինչը 2022թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ փոքր է 1.83 տոկոսային կետով, 2022թ. ապրիլի 30-ի համեմատությամբ՝ ավել է 13.03 տոկոսային կետով, իսկ 2021թ. ապրիլի 30-ի համեմատությամբ՝ պակաս 10.45 տոկոսային կետով:

ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2023-2025 ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՂԵՆՇԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (2021-2023թթ. ապրիլ ամսվա վերջի դրությամբ)

ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը, տարի



Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով), %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի, %



ՀՀ Կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները, %



ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2023-2025թթ. ռազմավարական ծրագրով՝

1) պարտքի մինչև մարում միջին ժամկետի ուղենշային ցուցանիշը սահմանված է 7-10 տարի: ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը 2023թ.ապրիլի 30-ի դրությամբ կազմել է 7.4 տարի: Այս ցուցանիշը 2022թ. ապրիլի 30-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից պակաս է 0.9 տարով, իսկ 2021թ. ապրիլի 30-ի ցուցանիշից՝ 1.5 տարով;

2) առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշռի (պետական գանձապետական պարատոմսերի գծով) ուղենշային ցուցանիշը սահմանված է առավելագույնը 20%: Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով) 2023թ. ապրիլի 30-ի դրությամբ կազմել է 13.2%, որը 2022թ. ապրիլի 30-ի և 2021թ. ապրիլի 30-ի մակարդակներից մեծ է համապատասխանաբար՝ 3,1 և 0,7 տոկոսային կետերով:

3) ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշռի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 80%: ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի 2023թ.ապրիլի 30-ի դրությամբ ունեցել է հետևյալ պատկերը. ֆիքսված տոկոսադրույքով՝ 83.9%, լողացող տոկոսադրույքով՝ 16.1%: Ընդ որում, 2023թ. ապրիլի 30-ի դրությամբ արձանագրված ֆիքսված տոկոսադրույքի ցուցանիշը 2022թ. ապրիլի 30-ի ցուցանիշից ավել է 1.1 տոկոսային կետով, իսկ 2021թ. ապրիլի 30-ի ցուցանիշից ավել է 1.7 տոկոսային կետով:

4) ներքին պարտքի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 30%, ՀՀ կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները 2023թ. ապրիլի 30-ի դրությամբ ունեցել են հետևյալ պատկերը. արտաքին պարտք՝ 56.4%, ներքին պարտք՝ 43.6%: Ընդ որում, 2023թ.ապրիլի 30-ի դրությամբ արձանագրված ներքին պարտքի կշռի ցուցանիշը 2022թ. ապրիլի 30-ի և 2021թ. ապրիլի 30-ի ցուցանիշները գերազանցում է համապատասխանաբար՝ 11.0 և 19.1 տոկոսային կետերով: